ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-6-2-Ա

ք. Երևան 23.12.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի դեկտեմբերի 23-ի նիստում քննարկեց 2015 թվականի դեկտեմբերի 4-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Մեյցզու Թեքնոլոջի Քո., Լթդ ընկերության (Մեյցզու Թեքնոլոջի բիլդինգ, Տեքնոլոջի ընդ ինովեյշն քոստ, Ժուհայ սիտի, Գուանդոնգ պրովինս, 519085, Պ.Ր. Չայնա) «Մուլտիմեդիային հեռախոս» (հայտ No20150003) արդյունաբերական նմուշի վկայագիր տալը ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Արդյունաբերական նմուշի վկայագիր տալը ամբողջությամբ մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտարկված արդյունաբերական նմուշի առարկան չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գրանցման պայմաններին.

Ուսումնասիրելով Ձեր փաստարկները, և ևս մեկ անգամ համեմատելով ներկայացվաց «Մուլտիմեդիային հեռախոսը» հայկական շուկայում առկա «Sumsung» ընկերության՝ մասնավորապես «Samsung Galaxy S5 mini DS» հեռախոսի և, ընդհանուր առմամբ «Sumsung» և «iPhone» ընկերությունների այլ հեռախոսների հետ, փորձաքննությունը հանգել է այն եզրակացությանը, որ տվյալ արդյունաբերական նմուշը շփոթություն կառաջացնի նույնիսկ տեղեկացված սպառողի մոտ, այդ իսկ պատճառով այն ենթակա չէ գրանցման: Ձեր կողմից բերված համեմատությունները չեն կարող ընդունելի լինել, քանի որ սպառողը ապրանքն ընկալում է ոչ թե առանձին տարրերով, այլ իր ամբողջության մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված արդյունաբերական

նմուշի առարկան չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գրանցման պայմաններին:

Բողոքարկողի ներկայացուցիչը ներկա չէր նիստին:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և հայտարկված արդյունաբերական նմուշը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ արդյունաբերական նմուշի (հայտ No20150003) վկայագիր տալը ամբողջությամբ մերժելու մասին որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ